

Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 2004/8/ԵՀ հրահանգի կիրառման նպատակներով Էլեկտրական և ջերմային էներգիայի անջատ արտադրության ներդաշնակեցված արդյունավետության բազային (հղումային) արժեքները սահմանող՝ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2006 թվականի դեկտեմբերի 21-ի ՈՐՈՇՈՒՄ (ծանուցված՝ C(2002) 1527 փաստաթղթի համաձայն)

(Եվրոպական տնտեսական տարածքին առնչվող տեքստ) (2007/74/ԵՀ)

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ,

հաշվի առնելով «Եվրոպական համայնքի հիմնադրման մասին» պայմանագիրը,

հաշվի առնելով «Էներգիայի ներքին շուկայի ջերմության օգտակար պահանջարկի վրա հիմնված համակցված արտադրության խրախուսման և 92/42/ԵՀ հրահանգում կատարված փոփոխությունների մասին» Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 2004/8/ԵՀ հրահանգը և, մասնավորապես, դրա 4(1) հոդվածը,

Քանի որ

1) համաձայն 2004/8/ԵՀ հրահանգի 4-րդ հոդվածի՝ Հանձնաժողովը սահմանում է Էլեկտրական և ջերմային էներգիայի անջատ արտադրության ներդաշնակեցված արդյունավետության բազային (հղումային) արժեքները, որոնք բաղկացած են արժեքների մատրիցայից, որոնք տարբերակվում են համապատասխան գործոններով՝ ներառյալ կառուցման տարին և վառելիքի տեսակը,

2) Հանձնաժողովը, 2004/8/ԵՀ հրահանգի 4(1) հոդվածի համաձայն, ավարտել է փաստաթղթավորված վերլուծությունը: Այս վերլուծության փուլում դիտարկվող լավագույն և տնտեսապես նպատակահարմար տեխնոլոգիաների կատարելագործումը փաստում է, որ Էլեկտրաէներգիայի անջատ արտադրության ներդաշնակեցված արդյունավետության բազային (հղումային) արժեքների համար անհրաժեշտ է տարբերակում մտցնել՝ կապված համակցված արտադրության տեղակայանքի կառուցման տարվա հետ: Ավելին, կլիմայական պայմաններին վերաբերող ուղղման գործակիցները կիրառվում են այս բազային (հղումային) արժեքների նկատմամբ, որովհետև վառելիքից արձակվող Էլեկտրաէներգիայի թերմոդինամիկան կախված է շրջակա օդի ջերմաստիճանից: Բացի այդ, կորստից խուսափած բաշխման ցանցերի ուղղման գործակիցները կիրառվում են այս բազային (հղումային) արժեքների նկատմամբ՝ հաշվի առնելու համար ապակենտրոնացված

արտադրության պատճառով բաշխման ցանցի շահագործման սահմանափակումով պայմանավորված էներգախնայողությունը,

3) ի հակադրություն դրան, վերլուծությունը ցույց տվեց, որ, կապված համակցված արտադրության տեղակայանքի կառուցման տարվա հետ, ջերմային էներգիայի անջատ արտադրության ներդաշնակեցված արդյունավետության բազային (հղումային) արժեքների համար տարբերակում մտցնելու անհրաժեշտություն չկա, քանի որ ջեռուցման կաթսաների զուտ էներգետիկ արդյունավետությունը վերլուծության փուլում դեռ նոր էր սկսել կատարելագործվել: Կլիմայական պայմաններին վերաբերող ուղղման գործակիցների անհրաժեշտություն չկա, քանի որ վառելիքից արձակվող ջերմության թերմոդինամիկան կախված չէ շրջակա օդի ջերմաստիճանից: Բացի այդ, ջերմային կորուստ կրած բաշխիչ կայանների համար ուղղման գործակիցներ անհրաժեշտ չեն, քանի որ ջերմությունը միշտ օգտագործվում է արտադրության վայրի մոտակայքում,

4) ներդաշնակեցված արդյունավետության բազային (հղումային) արժեքները հիմնված են 2004/8/ԵՀ հրահանգի III (գ) հավելվածում նշված սկզբունքների հիման վրա,

5) համակցված արտադրության մեջ ներդրումներ կատարելու և ներդրողների շարունակական վստահության համար կայուն պայմաններ են անհրաժեշտ: Այդ նկատառումներով համակցված արտադրության տեղակայանքի համար անհրաժեշտ է բավականին երկար ժամանակով՝ տասը տարվա ընթացքում պահպանել միևնույն բազային (հղումային) արժեքները: Այնուամենայնիվ, հաշվի առնելով 2004/8/ԵՀ հրահանգի հիմնական նպատակը, որն է՝ խթանել համակցված արտադրությունը՝ պահպանելու համար նախնական էներգիան, համակցված արտադրության ավելի հին տեղակայանքը վերազինելու համար դրդապատճառ է անհրաժեշտ, որպեսզի հնարավոր լինի բարձրացնել էներգաարդյունավետությունը: Այդ իսկ պատճառով համակցված արտադրության տեղակայանքների նկատմամբ կիրառվող էլեկտրաէներգիայի արդյունավետության բազային (հղումային) արժեքները խստացվում են՝ սկսած այդ կայանքի կառուցմանը հաջորդող տասնմեկերորդ տարվանից,

6) սույն Որոշմամբ նախատեսված միջոցները համապատասխանում են էլեկտրական և ջերմային էներգիայի համակցված արտադրության հարցերով կոմիտեի կարծիքին,

ԸՆԴՈՒՆԵՑ ՍՈՒՅՆ ՈՐՈՇՈՒՄԸ.

Հոդված 1

Ներդաշնակեցված արդյունավետության բազային (հղումային) արժեքների սահմանումը

Էլեկտրական և ջերմային էներգիայի անջատ արտադրության ներդաշնակեցված արդյունավետության բազային (հղումային) արժեքները ներկայացված են համապատասխանաբար I և II հավելվածներում:

Հոդված 2

Էլեկտրական էներգիայի անջատ արտադրության ներդաշնակեցված արդյունավետության բազային (հղումային) արժեքների ուղղման գործակիցները

1. I հավելվածով նախատեսված ներդաշնակեցված արդյունավետության բազային (հղումային) արժեքները յուրաքանչյուր անդամ պետության տարածքում կլիմայական միջին պայմաններին հարմարեցնելու համար անդամ պետությունները կիրառում են III (ա) հավելվածում նշված ուղղման գործակիցները:

Միջին կլիմայական պայմանների համար նախատեսված ուղղման գործակիցները չեն կիրառվում վառելիքային տարրերի վրա հիմնված համակցման տեխնոլոգիաների նկատմամբ:

Եթե անդամ պետության տարածքում պաշտոնական օդերևութաբանական տվյալները շրջակա օդի տարեկան ջերմաստիճանի հետ կապված 5 օC կամ ավելի տարբերություններ են արձանագրել, ապա այդ անդամ պետությունը, համաձայն Հանձնաժողովին ներկայացված ծանուցման, կարող է առաջին պարբերության նպատակով օգտվել կլիմայական մի քանի գոտիներից՝ կիրառելով III (բ) հավելվածով նախատեսված մեթոդը:

2. Անդամ պետությունները կիրառում են IV հավելվածում նշված ուղղման գործակիցները՝ I հավելվածում նշված ներդաշնակեցված արդյունավետության բազային (հղումային) արժեքները կորստից խուսափած բաշխման ցանցերին հարմարեցնելու նպատակով:

Կորստից խուսափած բաշխման ցանցերի համար նախատեսված ուղղման գործակիցները չեն կիրառվում փայտանյութից ստացված վառելիքի և կենսագազի նկատմամբ:

3. Եթե անդամ պետությունները կիրառում են և III(ա) և IV հավելվածում նշված ուղղման գործակիցները, ապա նախքան IV հավելվածը կիրառելը նրանք կիրառում են III(ա) հավելվածը:

Հոդված 3

Ներդաշնակեցված արդյունավետության բազային (հղումային) արժեքների կիրառումը

1 Անդամ պետությունները կիրառում են համակցված արտադրության տեղակայանքի կառուցման տարվա համար գրանցված I հավելվածում նշված ներդաշնակեցված արդյունավետության բազային (հղումային) արժեքները: Ներդաշնակեցված արդյունավետության բազային (հղումային) արժեքները կիրառվում են համակցված արտադրության տեղակայանքի կառուցման տարվան հաջորդող տասը տարիների ընթացքում:

2 Համակցված արտադրության տեղակայանքի կառուցման տարվան հաջորդող տասնմեկերորդ տարվանից սկսած՝ անդամ պետությունները կիրառում են ներդաշնակեցված արդյունավետության բազային (հղումային) այն արժեքները, որոնք, 1-ին պարբերության ուժով, տասը տարի կիրառվում են համակցված արտադրության տեղակայանքի նկատմամբ: Ներդաշնակեցված արդյունավետության բազային (հղումային) այս արժեքները կիրառվում են մեկ տարի ժամկետով:

3 Սույն հոդվածի նպատակով՝ համակցված արտադրության տեղակայանքի կառուցման տարի նշանակում է էլեկտրաէներգիայի առաջին արտադրության օրացուցային տարի:

Հոդված 4

Համակցված արտադրության տեղակայանքի վերազինումը

Եթե համակցված արտադրության գոյություն ունեցող տեղակայանքը վերազինվում է, և վերազինման համար ներդրումային ծախսերը գերազանցում են համակցված արտադրության նոր տեղակայանք ստեղծելու համար ներդրումային ծախսերի 50%-ը, ապա համակցված արտադրության վերազինված տեղակայանքի էլեկտրաէներգիայի առաջին արտադրության օրացուցային տարի է համարվում տեղակայանքի կառուցման տարին՝ 3-րդ հոդվածի նպատակով:

Հոդված 5

Վառելանյութերի խառնուրդը

Եթե համակցված արտադրության տեղակայանքը գործարկվում է վառելանյութերի խառնուրդով, ապա անջատ արտադրության ներդաշնակեցված արդյունավետության բազային (հղումային) արժեքները համաչափորեն կիրառվում են տարբեր վառելանյութերի ծախսած էներգիայի համար հաշվարկված միջինի նկատմամբ:

Հոդված 6

Հասցեատերերը

Սույն Որոշումը հասցեագրված է անդամ պետություններին:

Կատարված է Բրյուսելում, 2006 թվականի դեկտեմբերի 21-ին:

Հանձնաժողովի կողմից՝

Անդրիս ՓԻԲԱԼԳՍ

Հանձնաժողովի անդամ

ՀԱՎԵԼՎԱԾ I

Էլեկտրական էներգիայի անջատ արտադրության ներդաշնակեցված արդյունավետության բազային (հղումային) արժեքները (ներկայացված՝ 1-ին հոդվածում)

Ստորև բերված աղյուսակում ներկայացված էլեկտրական էներգիայի անջատ արտադրության ներդաշնակեցված արդյունավետության բազային (հղումային) արժեքները հիմնված են նվազագույն ջերմարտադրողականության և ԻՍՕ ստանդարտ պայմանների վրա (շրջակա օդի ջերմաստիճանը 15 օC, ճնշումը՝ 1,013 բար, օդի հարաբերական խոնավությունը՝ 60 %):

	Կառուցման տարին՝ Վառելիքի տեսակը՝	1996 և դրանից առաջ	1997	1998	1999	2000	2001	2002	2003	2004	2005	2006-2011
Պինդ	Քարածուխ/կոքս	39,7	40,5	41,2	41,8	42,3	42,7	43,1	43,5	43,8	44,0	44,2
	Գորշ ածուխ/գորշ ածխի բրիկետներ	37,3	38,1	38,8	39,4	39,9	40,3	40,7	41,1	41,4	41,6	41,8
	Տորֆ/տորֆային բրիկետներ	36,5	36,9	37,2	37,5	37,8	38,1	38,4	38,6	38,8	38,9	39,0
	Փայտանյութից ստացված վառելանյութ	25,0	26,3	27,5	28,5	29,6	30,4	31,1	31,7	32,2	32,6	33,0
	Գյուղատնտեսական կենսազանգված	20,0	21,0	21,6	22,1	22,6	23,1	23,5	24,0	24,4	24,7	25,0
	Կենսատրոհվող (կենցաղային)	20,0	21,0	21,6	22,1	22,6	23,1	23,5	24,0	24,4	24,7	25,0

ՀԱՎԵԼՎԱԾ II

Ջերմային էներգիայի անջատ արտադրության ներդաշնակեցված արդյունավետության բազային (հղումային) արժեքները (ներկայացված՝ 1-ին հոդվածում)

Ստորև բերված աղյուսակում ներկայացված ջերմային էներգիայի անջատ արտադրության ներդաշնակեցված արդյունավետության բազային (հղումային) արժեքները հիմնված են նվազագույն ջերմարտադրողականության և ԻՍՕ ստանդարտ պայմանների վրա (շրջակա օդի ջերմաստիճանը 15 օC, ճնշումը՝ 1,013 բար, օդի հարաբերական խոնավությունը՝ 60 %):

	Վառելիքի տեսակը՝	Գոլորշի (* 2)/տաք ջուր	Արտանետված գազի ուղղակի օգտագործումը (** 3)
Պինդ	Քարածուխ/կոքս	88	80
	Գորշ ածուխ/գորշ ածխի բրիկետներ	86	78
	Տորֆ/տորֆային բրիկետներ	86	78
	Փայտանյութից ստացված վառելանյութ	86	78
	Գյուղատնտեսական կենսազանգված	80	72
	Կենսատրոհվող (կենցաղային) թափոններ չվերականգնվող (կենցաղային և արդյունաբերական) թափոն	80	72
	Այրվող թերթաքար	86	78

Հեղուկ	Յուղ (գազային յուղ + մազութի մնացորդ), ՀՆԳ	89	81
	Կենսավառելիքներ	89	81
	Կենսաբանորեն տրոհվող թափոններ	80	72
	Չվերականգնվող թափոններ	80	72
Գազային	Բնական գազ	90	82
	Նավթավերամշակման գործարանի գազ/ջրածնային կենսագազ	89	81
	Կենսագազ կոքսային վառարանից ստացված գազ, խարամապորտլանդցեմենտային գազ + այլ արտանետված գազեր	70	62
	արտանետված գազեր	80	72

Էլեկտրական էներգիայի անջատ արտադրության ներդաշնակեցված արդյունավետության բազային (հղումային) արժեքների համար միջին կլիմայական պայմանների և կլիմայական գոտիները տարբերակելու մեթոդների ուղղման գործակիցները (2(1) հոդվածով նախատեսված)

ա) Միջին կլիմայական պայմանների համար նախատեսված ուղղման գործակիցները

Շրջակա օդի ջերմաստիճանի ուղղումը հիմնված է անդամ պետությունում տարեկան միջին ջերմաստիճանի և ԻՍՕ ստանդարտ պայմանների միջև եղած տարբերությունների վրա (15 օC): Ուղղումը կատարվում է հետևյալ ընթացակարգով՝ 15 օC-ից բարձր յուրաքանչյուր աստիճանի համար 0,1 տոկոսային կետ արդյունավետության կորուստ; 15 օC-ից ցածր յուրաքանչյուր աստիճանի համար 0,1 տոկոսային կետ արդյունավետության աճ:

Օրինակ՝ Եթե անդամ պետության տարածքում տարեկան միջին ջերմաստիճանը կազմում է 10 օC, ապա տվյալ անդամ պետության տարածքում համակցված տեղակայանքների բազային (հղումային) արժեքը պետք է բարձրացվի 0,5 տոկոսային կետով:

բ) Կլիմայական գոտիների տարբերակման մեթոդները

Յուրաքանչյուր կլիմայական գոտու սահմանները որոշվում են շրջակա օդի տարեկան միջին ջերմաստիճանի իզոթերմով (ամբողջական աստիճան Յելսիուսով), որն առնվազն 4 օC-ով տարբերվում է: Շրջակա օդի տարեկան միջին ջերմաստիճանի տարբերությունը հարակից կլիմայական գոտիների միջև կազմում է առնվազն 4 օC:

Օրինակ՝

Անդամ պետության տարածքում Ա կետում շրջակա օդի ջերմաստիճանը 12 օC է իսկ Բ կետում՝ 6 օC: Տարբերությունը կազմում է ավելի, քան 5 օC: Անդամ պետությունն այժմ հնարավորություն ունի ներկայացնելու երկու կլիմայական գոտիներ, որոնք իրարից առանձնացված են 9 օC իզոթերմով՝ այդպիսով հստակեցնելով մի կլիմայական գոտին, որն ընկած է 9 օC և 13 օC-ի միջև և ունի 11 օC շրջակա օդի տարեկան միջին ջերմաստիճան և մյուս կլիմայական գոտին, որն ընկած է 5 օC և 9 օC-ի միջև և ունի 7 օC շրջակա օդի տարեկան միջին ջերմաստիճան:

ՀԱՎԵԼՎԱԾ IV

Էլեկտրական էներգիայի անջատ արտադրության ներդաշնակեցված արդյունավետության բազային (հղումային) արժեքների կիրառման համար նախատեսված կորստից խուսափած բաշխման ցանցերի ուղղման գործակիցները (2(2) հոդվածով նախատեսված)

Էլեկտրական հոսանքի լարվածությունը	Բաշխման ցանցեր արտահանվող էլեկտրաէներգիայի համար	Տեղում սպառվող էլեկտրաէներգիային համար
> 200 կՎ	1	0,985
100-200 կՎ	0,985	0,965
50-200 կՎ	0,965	0,945
0,4-200 կՎ	0,945	0,925
< 0,4 կՎ	0,925	0,860

Օրինակ՝

100 կՎ-տ հզորությամբ գազամխոցային շարժիչով համակցված տեղակայանքը, որն աշխատում է կենսագազով, արտադրում է 380 Վ էներգիա: Այս էներգիայի 85 %-ն օգտագործվում է սեփական սպառման համար, իսկ 15 %-ով սնվում է բաշխման ցանցը: Կայանը կառուցվել է 1999 թվականին: Շրջակա օդի տարեկան միջին ջերմաստիճանը կազմում է 15 օC (այնպես որ կլիմայական ուղղման կարիք չի զգացվում):

Սույն Որոշման I հավելվածի համաձայն՝ բնական գազի համար 1999 թվականին գրանցված ներդաշնակեցված արդյունավետության բազային (հղումային) արժեքը կազմում է 51,1 %: Բաշխման ցանցի կրած կորուստը շտկելուց հետո համակցված արտադրության այս տեղակայանքում էլեկտրական էներգիայի անջատ արտադրության ներդաշնակեցված արդյունավետության բազային (հղումային) արժեքը (հիմնվելով սույն հավելվածում նշված գործակիցների հաշվարկված միջինի վրա) կլինի՝

$$\eta_{ut} = 51,1\% * (0,860 * 85\% + 0,925 * 15\%) = 44,4\%$$